

Տարեկան գինը՝ 10 ռուբլ, կես տարվանը՝ 6 ռուբլ:

Փոփոխում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Ммас“

ՄԵԼԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է աժէն լեզուով

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Կորգանովի տան և եօթ սև ըուէներ—
Ն երբէն տեսութիւն. Գաղաքագլխի ըն-
տրութիւնը, Նամակ խմբագրին: Նամակ խմբա-
գրին: Ներքին լուրեր: Արտաքին տեսու-
թիւն: Թիւրքիա: Լուսինեաններ: Նամակ Թիւր-
քիայից: «Մշակ» հեռագիրներ: Յայտարարու-
թիւններ: Տեղեկացոյց: Բ ա ն ա ս ի Ր ա կ ա ն :
Մատենագրութիւն:

Ա. ԿՈՐԳԱՆՕՎԻ ՏԱՍՆ ԵՒ ԵԾԹ ՍԵՒ ՔՈՒԷՆԵՐ

Ամեն ընտրողական ժողովներ
մէջ մեծամասնութիւնը տիրապե-
տում է սակաւամասնութեան վրա:
Բայց այդ չէ նշանակում, ինչպէս
պ. Լւանդուլով կարծում է, որ
մեծամասնութիւնը պէտք է բռնա-
նայ սակաւամասնութեան համոզ-
մունքի վրա: Պ. Նիկոլաձէ կարող
էր սխալվել իր վերաբերիչ կար-
ծիքը յայտնելով Ա. Կորգանովի
մասին, բայց այդ չէ նշանակում
որ նրան պէտքէ լռեցնէին. նրա
կարծիքը, գուցէ, նրա խոր հա-
մոզմունքից էր ծագում և եթէ
քննվէր, գուցէ որ և է հիմք
կունենար: Միթէ մեծամասնու-
թիւնը չէ կարող սխալվել, եթէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Die Armenier. — Franz v. Löhner (Wiener Abend-
post № 255—258 Beilage 1878) — ՀԱՅԵՐ.
Հեղ. ՖՐԱՆՑ ՖՈՆ ԼԵՆԶԵՐ

III

Հայաստանի աշխարհագրական դրբի վրա
Լեոնէր բաւական քննութիւններ անելուց յետոյ
հասնում է այս եզրակացութեան. մինչդեռ սա-
րերի վրա ձիւնը ամառ ժամանակը 12,000 ոտք
բարձրութեան վրա մնում է կանգնած, երկիրը
վայելում է միայն մի եռամսեայ ամառ, բայց
դրա փոխարէն թաղված է լինում նա ամեն
տարի կրկին այնչափ ժամանակ ձիւնի մէջ, Չը
նայելով ձիւնի այսչափ երկար ժամանակ տես-
ւում, ամառը ջուրը շատ պակաս է որովհետեւ
երեք շաբաթվայ կարճ զարուհիք յետոյ խա-
կոյն սկսվում է խորշակահար կիզիչ տոթը, որ չո-
րացնում է բոլոր խոնաւութիւնը: Իսկ երբ աշնան
բոյսերն ու կենդանիները սկսում են չունչ առ-
նել, այս եղանակն էլ երեք շաբաթից յետոյ
անցած զնացած է լինում: Այժմեան հայերը
Հայաստանում հարուստից չեն ազատվում եր-
բէք, թէ և նոցա առողջութիւնը շատ լաւ է:
Այսպիսի մի ժողովուրդ որ տարուց տարի կրում
է Հայաստանի ձմեռը, կունենայ անշուշտ իր
բնութեան մէջ այնքան կոշտութիւն, ջիւղութիւն,
որքան և միտոսնակ հակումն խտտաւերու-
թեան:

Եթէ Հայաստանը բազմաթիւ միւս աշխարհի

չասնը համամիտ լինել որ և է
հարստահարողի հետ: Միթէ այն
ժամանակ սակաւամասնութեան
բարոյական պարտաւորութիւն չէ
բողոքել մեծամասնութեան դէմ:

Ճշմարիտ է Ա. Կորգանով
ստացաւ այնքան սպիտակ ձայ-
ներ, որ նախկին քաղաքագլուխ
Կիպիանի անգամ չունէր: Կի-
պիանի ընտրվեցաւ 37 ձայների
բազմութեամբ, իսկ Կորգանով 47
ձայների բազմութեամբ:

Առհասարակ ամեն ընտրողա-
կան ժողովում մեծամասնութիւնն
է վճռում ամեն խնդիրներ, և
սակաւամասնութիւնը, որքան էլ
բողոքի, վերջը ստիպված է լինում
խոնարհվել մեծամասնութեան վը-
ճուի առջև:

Երբ մի պաշտօնեային ընտ-
րում են, սպիտակ բուէները ներ-
կայացնում են նրա կուսակցու-
թիւնը, նրա համակրողներին, իսկ
սև բուէները հանդիսանում են
կամ որպէս անտարբերներ, կամ
որպէս ընտրվածի հակառակորդ-
ներ, — բայց այդ սև բուէները չէ
կարելի ընդունել որպէս նախա-

բարձրաւորակ երկիրների հետ, սա իրան մեր-
կութեամբ մի այնպիսի տպաւորութիւն կը ներ-
գործէ, որ կարծես թէ բազում ժամանակներից
առաջ այս տեղ այլ և այլ վայրերի ազգեր և
ազգիք վրասացել են, ու երկիրը կողոպտել մեր-
կացրել են իր զարգացմանը և ծաղկից: Տներ
կան հնամաշ աւերակ շինութեանց պատերի վրա
կպած, որ իրանք էլ սկսած են քանդվել: Միայն
այն պատական անուշահոտ մրգեղէնները (մեր
կեռասն էլ յայտնի է որ այնտեղից է, առում է
Լեօնէր) Հայաստանի լեռներում մի սքանչելի
չքեղութիւն և քաղցր հոտ ունեն, որ յիշեցնում
են վաղուց անցած զնացած գրախտական ժա-
մանակը:

Ընդհանրապէս հայոց պատմութիւնը մեզ ներ-
կայացնում է քիչ փառազարդ, այլ առաւել ա-
րիւնազարդ էջեր: Տասն և ութ դարուց ի վեր
այդ պատմութիւնը չարձարանքների մի պատմու-
թիւն է:

Յօդուածագիրը այս խօսքերից յետոյ հայոց
պատմութիւնը ազգային պատմագիրների առաջ-
նորդութեամբ սկսում է Երանէթի թոռն թողար-
մայից կամ թողարմից և բերում հասցնում է
ներկային, ցոյց տալով որ Հայաստանը միշտ
պատերազմների անպարել և մօտ ու հեռի դրա-
ցիների բազմաթիւ երկիրն է եղել: Հարուստ
փառաքել են Հայաստանին տրեւել և տրեւել
են անորեանացիները, բաբելացիները, պարսի-
ները, յոյները, հռոմայեցիները, պարթևները, արաբա-
ցիները, սելճուկները, մոնղոլները, զարձեալ պար-
սիկներ և յետոյ տաճիկներ: «Հիմա էլ Մեծ
Հայաստանը դարձեալ կուի նվաճվել եղած:
Նորա մի երրորդ մասը ուսումնաց ձեռքին է, պարս-
կաց ձեռքին կա մի վեցերորդ մասը, իսկ մնա-
ցեալը բոլոր տաճկաց իշխանութեան ներ-
քոյ է»:

«Յիրաւի սա մի երկարատև պատմութեան ծը-

տինքի կամ բարոյական մեղա-
դրանքի արտայայտութիւն կան-
դիդատի դէմ:

Բայց երբ որ մի կանդիդատին
քուէարկելուց առաջ արտասան-
վեցաւ նրա դէմ այնպիսի մի ճառ
ինչպէս Նիկոլաձէի ճառն էր Կոր-
գանովին ընտրելուց առաջ, կան-
դիդատին ստուած 17 սև բուէներ
ստանում են մի այլ նշանակու-
թիւն՝ նրանք հանդիսանում են
որպէս համամիտ, համախոհ, հա-
մերաշէն պ. Նիկոլաձէի բերանով
Կորգանովի վրա բարձած մեղա-
դրանքի հետ: Ուրիշ բան կը լը-
ներ, եթէ մէկը վեր կենար և
փաստերով, հաստատ ապացոյց-
ներով հանէր Կորգանովի անունից
այն բարոյական բիծը, որ դրվե-
ցաւ նրա վրա: Բայց այդ ոչ որ
չարաւ, չուզեց, կամ չը կարողացաւ
անել: Միայն Լւանդուլով պաշտ-
պանեց նրան պաշտօնական
ձևով, ցոյց տալով որ մեծամաս-
նութիւնը կարող է բռնանալ փո-
քրամասնութեան համոզմունքի
վրա և Դումայի մեծամասնու-
թիւնն էլ հաստատեց իրան շո-

րագիրն է, որ չուտով կը լրացնէ չորս հազար
տարին: Ո՞ր ազգ կարող է պարծենալ մի այս-
քան երկար, բայց պատմագրական վկայութիւն-
ներով հաստատված պատմութեամբ: Եւրօպացի
ազգերից ոչ մի մի, իսկ Ասիայում, միայն հը-
րէաները, պարսիկները, հնդկացիները, չինացի-
ները, Աֆրիկայում միայն կոպտերը:

Բայց այս չորս հազար տարիներում որքան
որքան կարճատև են այն միջոցները, ուր Հա-
յաստանը վայելում էր երջանկութիւն և անկա-
խութիւն: Ինչ դիրքին էր օտարներին հին Հա-
յաստանի թագը ձեռք ձգել: Քանի ստակալի
փոթորիկներ, քանի արիւնուշտ պատերազմ-
ներ և աւերումներ է տարել Հայաստանը: Զար-
մանք չէ եթէ նորա ժողովուրդի մէջ մտել է զգոյշ
դիրքեցի, վեհերոտ բնաւորութիւն: Այլ զարմա-
նալին նա է, որ Հայաստանը իբրև ազգ և թա-
ղաւորութիւն միշտ և յաւէտ կանգնէ և վերա-
հաստատվեցաւ: Երկիրն և կրկին անգամ հայերը
թօթալիցի օտարների լուծը և իջնելով իրանց
բարձրաւորակներից ձեռնարկեցին երկրակալու-
թեան: Եւ այժմ ամենայնիւ դեռ նստած է այդ
տարօրինակ և աննուաճ ազգը իր վաղեմի քաղա-
ված հայրենիքում: Ահա մի խտտաբերութիւն
և տոկոսութիւն, որ վերջ ու վախճան չը գիտէ:
Նոյն իսկ այս վերջին ութ դարերումն էլ, որ ի-
րան ձեռքերն ու ոտքերը չխթայալկալ արած
կաշկանդել էին, նա շարունակեց ապրել: Չունի,
ուրեմն, այս ազգը կատարեալ իրաւունք ապա-
գայի համար յոյսեր ունենալու, պահանջներ ու-
նենալու: Անսասան է նորա վատաբերութիւնը, թէ
կրկին անգամ ազատ ու հօր կը լինի»:

«Բայց առաջ քան թէ քննենք այս լուռ և
անշնչելի յոյսերի հիմն ու չափը, պէտք է աչքի
անցնել հայոց լուսաւորութեան պատմութիւնը»:

Այս մասին էլ Լեօնէր այն իրողութիւնն ալ-

ղորթութող ձայնաւորի խօսքը նը-
րան ծափահարելով և ձայների
ահաղին բազմութեամբ ընտրելով
Կորգանովին:

Կորգանով պաշտօնապէս պաշտ-
պանված է եղել, այո՛, բայց բա-
րոյապէս արդարացրած չէ եղել:

Ուրեմն 17 սև բուէներ մնում
են որպէս կենդանի բողոք, որպէս
Նիկոլաձէի կարծիքի հետ համա-
միտ ձայներ:

Այդ տեսակ հանգամանքնե-
րում ընդունել քաղաքագլխի պաշ-
տօնը մի աղնիւ, կամ գոնէ գործ-
նական, խելօք մարդու համար
անհնարին է դառնում:

Եւ եթէ պ. Կորգանով ընդու-
նի էլ այդ պաշտօնը, նրա դրու-
թիւնը ոչ թէ միայն Դումայի
նախագահական աթոռի վրա,
բայց և որպէս քաղաքի ներկա-
յացուցիչ, հասարակութեան մէջ
և կառավարութեան առջև, շատ
շուտով բարոյապէս անտանելի և
անհնարին կը դառնայ:

Տասն և եօթ ձայնը բուէար-
կելով Նիկոլաձէի հետ ընդդէմ
47 ձայնի, ընտրողների 63 թիւի

աշխարհի լուսաւորութեան ամեն ճիւղին և առ-
տիճաններին, աւելի երկարօրէն խօսում է քրիս-
տոնէութեան ու մանաւանդ եկեղեցականու-
թեան մեր լուսաւորութեան գործի վրա արած
ազդեցութեան մասին և վերջը շարունակում
է այսպէս:

«Շատ հասկանալի է, ուրեմն, որ եկեղեցա-
կան պատմութեան մէջ այս դիրքը բռնելով
հայոց մատենագրութեան ստեղծիչն ու կենսա-
կրօնն էր: Հայոց առաջին առաքեալ, Գրիգոր
Լուսաւորիչը, սկսեց հայ գրականութիւնը իր
քարոզչութեամբ: Արդէն հետեւեալ դարում Աստուա-
ծաշունչը թարգմանվեցաւ, որ մեծ կաթողիկոս
Սահակի և բազմազէտ Մեհարպի գործն էր, և
սորան շուտով հետեւեցին բազմաթիւ ուրիշ առ-
տուածաբանական և իմաստասիրական, պատ-
մական և աշխարհագրական մատենագրութիւն-
ներ, շարականներ, սղերգութիւններ, ձառեր,
առակներ, և այլ և այլ թարգմանութիւններ,
յունարէնից և ասորերէնից, որոնց պահպանելը
հայերին ենք պարտական: Այս մատենագրա-
կան շարժումը վերջերք երբեմն երբեմն ընդ-
հատվեցաւ, բայց նորա բոլորովին դադարելը
տասն և չորրորդ դարի վերջումն էր, մինչդեռ
հինգերորդ դարը տուել էր հայերին իրանց ըն-
տիր մատենագրութիւնը: Նուազելու պատճառը
մասամբ այն սոսկալի աւերումներն էին, որ
նոցա երկիրն ու ազգը կրեց թիւրքերից, մոն-
ղոլներից և պարսիկներից, բայց մասամբ էլ
աշխարհաբար լեզուի ծնունդն էր, որ գործարը
իբրև սոսկ գրականական լեզու կո մղեց. բայց
և այնպէս յետին դարերում էլ մի քանի պատ-
մական և աշխարհագրական գրքեր հեղինակվե-
ցան»:

(Կը. շարունակվի)

Մեր ընթերցողներին ուշադրութիւն ենք դարձնում թիւրքիացի պ. Նշան Թերզեպեցիի մեր քերթի մէջ տպւած խմբագրին ուղղւած նամակներին վրա, որոնց մէջ նա առաջարկում է ուսումնարանական միութիւն հաստատել Մեծայայտատանի, Փորք-Հայաստանի և Կլիկիայի մէջ, Պարոնի մտքերը թիւրքաց հայերի սահմանադրութեան ապարդիւն լինելու մասին ուշադրութեան արժանի են, Մենք կարծում ենք, թէ մասնատր նուիրատուութիւններով անհասկնալիք լինի իրադրո՞ծի պ. Թերզեպեցի անունով:

Ջարակութիւնը վերջապէս պէտք է մտածել թիֆլիսում Բազուրի «Մարդասիրական (հնկերութեան)» պէս մի կենտրոնական հայոց բարեգործական ընկերութեան իրագործելու մասին:

Ստացանք «Մանկավարժական թերթի» № 6, այսինքն անցնել 1878 թիվ գեկտեմբերի տետրակը:

Հաստատ աղբիւրներէց տեղեկացած ենք որ Արծրունու Գալլէրէում չինվող նոր թատրոնը լուսաւորվելու է գաղտնի կերպով լուսաւորութիւնը մտցրած կը լինի թատրոնի մէջ, Գալլէրէայի բոլոր խանութատէրերը հետզհետէ կարող են, եթէ կամենան, գաղի լուսաւորութիւնը մտցնել և իրանց մազաղինները մէջ, առանձին պայմաններ կապելով տան տէրերի հետ:

Լսում ենք որ այսօր երեկոյան հաւաքվելու են թիֆլիսի մի մասնաւոր տան մէջ հայոց թատրոնական գործով հետաքրքրվող մի քանի պարոններ, որպէս զի խորհրդակցեն թիֆլիսի մէջ հայոց թատրոնական մի ընկերութեան հաստատելու հարցերը մասին:

Յունվարի 30-ին ամբողջ Ռուսաստանը տոնում էր իր նշանաւոր բանաստեղծի Գրիգոր Եղուշի մահվան յիսուսամեայ տարեդարձը: Բայց թիֆլիսի Կարողացաւ աւելի լաւ պատուել երեւելի մարդուն: Գրիգորի միջոցով թաղված է թիֆլիսի սուրբ Դաւիթի եկեղեցում և յունվարի 30-ին կատարվեցաւ անգին բազմութեան ներկայութեամբ այդ բանաստեղծի գերեզմանի վրա: Նոյն օրը երեկոյան թատրոնում ռուս գերասանները, իսկ Կիւստոմու սիրողները ներկայացրին Գրիգորի «Դոբրո Եմ Կոմ» պիեսան: Գրիգորի երկու օր առաջ գրական երկոյ կար Կիւստոմու, որտեղ կարդացվեցան Գրիգորի կենսագրութիւնը և նրա հեղինակութեան մասին քննադատութիւնները: Վերջապէս փետրվարի 2-ին Հայոց Կիւստոմու լինելու է պարահանդէս: Այդ բոլոր խնջոյքներէց զոյգացած գումարը նշանակվելու է յոգուտ մի ստեպենդիայի Գրիգորի անունով:

Այս օրերս վախճանվել է թիֆլիսի մեր հին, համեստ աշխատողներից մին, Կարլ-Էդուարդ Շեֆեր, գերմանական և լատինական լեզուների վարժապետ: Դա հասարակութեանը շատ յայտնի մարդ էր, գուցէ, բայց պատկանում էր այն համեստ աշխատողների, մշակների թւին, որին մասնաւոր միշտ կը յիշեն նրա աշակերտները:

Մեզ հարորդում են, որ մի երկուստարդ դիմում է թիֆլիսի մի հարուստ վաճառականին խնդրելով նուրի մի աննշան գումար բարեգործական նպատակի համար: Պարոնը մերժում է: Նոյն երեկոյան պարոնը վառնել է 1000 ռուբլ գանազան միմասնների և անբարոյական կանանց վրա: Պէտք է ասել, որ պարոնը ընտանիքի հայր է և չափազանց բարեգործ մարդ է համարվում թիֆլիսում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՒՄ

Կ. Պոլսից գրում են գերմանական «Polit Correspond.» լրագրին հետևեալը:

«Հայոց ներսէս պատրիարքը Բ. Դրան ստիպողական ցանկութեան և Փրանսիական դեսպան պ. Ֆուրնիէի խորհրդին համաձայն յետ առաւ իր հրաժարման մասին խնդիրը: Յունվարի 14-ին պ. Ֆուրնիէ անձամբ ներկայացաւ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը: Այդ ժամանակ եկան անուանի հայերի կողմից ընտրված պատգամաւորներ քիւրդերից Հայաստանի մէջ Դեօրտուս գիւղում գործված հարստահարութիւնների դէմ բողոքելու համար: Քիւրդերի առաջնորդ Միր-Ալին, որին թիւրքաց կառավարութիւնը նախ ձերբակալել էր և յետոյ ամենքի զարմացման համար բաց էր թողել խմբով յարձակեցաւ վերել մեղքը գիւղի վրա, սպանելով գիւղի բնակիչներից եօթանասուն հոգի: Երբ պատգա-

մաւորները իմացան Փրանսիական դեսպանի հայոց պատրիարքարանում ներկայ գտնվելը, նրանք յարգանքով ուղղեցին նրան իրանց խնդիրը, աղաչելով նրան որ միջնորդի թիւրք կառավարութեան առջև Հայաստանի թշուառ բնակիչներին համար: Պ. Ֆուրնիէ վեր առաւ նրանց խնդիրը և խոստացաւ հայերին հասցնել այդ խնդրագիրը մեծ վիզիրին: Իսկ խնդիրը պատճէնը պ. Ֆուրնիէ տարաւ Կ. Պոլսի անգլիական դեսպան պ. Լայպլին:

Նոյն գերմանական լրագրին գրում են Կ. Պոլսից որ քիւրդերը շարունակում են հարստահարել հայերին ամենատնողում կերպով: «Հայոց պատրիարքը, ասում է լրագիրը, անհաշար գանգատվում է անգլիական հովանաւորութեան անցոր լինելու վրա, այն հովանաւորութեան, որ մինչև այժմ մնացել է միայն պլատոնական ձևով: Անգլիական դեսպանը անտարբերութեամբ և հանգիստ ոգով լսում է իրան ուղղած բոլոր գանգատները և իր դէմ յայտնած բոլոր դժգոհութիւնները, և միշտ խոստանում է պատրիարքին որ գործերը շուտով կուղղվեն»:

ԼՈՒՍԻՆԵՍՆԵՐ

Ֆրանսիական «Figaro» լրագրում կարդում ենք հետևեալ լուրը:

«Փետրվարի 7-ին մենք դատաստանի ենք կանչված իշխան Հայաստանի, իշխան Կորիկոսի, իշխան Լևոն Լուսինեանի ժառանգների այն բողոքի մասին, որ նրանք տուել են մեր 1876 թվ. սեպտեմբերի 1-ի համարի մէջ տպված հետևեալ տեղեկութեան մասին:

«Մեր ստորագրողներից մէկը մեզ հարորդում է Հայաստանի կարծեցեալ իշխանի մասին, որ այս տարի մեռաւ Միլանում, և որի մասին այս քաղաքի մամուլը շատ զբաղվեցաւ:

«Այս անձը որ ինքն իրան Կորիկոս Լուսինեան էր անուանում, կայսրութեան ժամանակ ուղղել պոլիցիային մասնակցեալ, և այնտեղ նրան ապացուցվեցաւ, որ նա Նավա կղզու մի հին հրէայ ընտանիքից է:

«Ընդունում ենք դատաւարացիին մի շուտութեան համար: Բերլինում նրան բանտարկեցին, որովհետեւ նա ձանձրացրեց թագաւորին և կոմս Մանտեֆելդին անդադար օգնութիւն խնդրելով: Նա ինքն իրան երուսաղեմի և Կիպրոսի իշխան էր անուանում և օգուտ էր քաղում Իտալիայի թագաւորի վեհաձեռնութիւնից: Լուսինեանները և Կորիկոսները վաղուց հետէ մեռած անհետացած են:

«Մեր բաղախնդիրը Հայաստանի Լևոն անունով մի պատուանշան էր շինել, որով շատերին յիմարացնում էր: Ընդունում ենք ծանօթ էր Բրաունշվայց դքսի և իշխան Լիւդվիգոս Նապոլեոնի հետ. այս վերջինը, երբ կայսր դարձաւ, յայտնեց Փարիզում որ նա կեղծ իշխան է»:

Սրանից յետոյ նոյն լրագրի խմբագիրը խնդրում է այն պարոններից, որոնք, եթէ որ և ից տեղեկութիւն ունեն յիշեալ պարոնի մասին, թող լարեհաձեռն հաղորդել իրան. նա ասում է որ այն ստորագրողը, որ սրանից երկու տարի առաջ հարցրել է իրան այս լուրը, նա էլ չէ կարող ցոյց տալ նրա տեղը, որովհետեւ նրա հետքերը այլ ևս չեն երևում: «Բայց եթէ նա գրել է մեզ այս լուրը, շարունակվում է լրագիրը, կիրեկի նա ունեցել է իր պատճառները, և եթէ պ. Լուսինեանի ժառանգները, կամ մի որ և է ուրիշ անձ կը կարողանայ մեզ ապացուցանել որ մենք սխալված ենք, մենք ուրախ կը լինենք ուղղել մեր սխալը: Իսկ եթէ ընդհանրապէս նրանք չեն կարողանաւ այդ անել, մենք մեզ պարծանք կը համարենք որ ճշմարտութիւն ենք ասել:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄՅՈՒՆ

Վան, 13 դեկտեմբերի

Նա առիթ ունեցաւ շրջելու Մեծ և Փոքր Հայաստանի դանաղան քաղաքներ և գիւղեր: Արեւելեան վերջին պատերազմի մի մեծ զարկ տուել է ամեն կողմի հայերուն, արթնացրել է դաւեր քնէն: Մարդ կը զարմանայ թէ ինչպէս հայ գիւղացին ամենայնպէս մի գիւղի մէջ հոր ոչ լրագրի երևա տեսած են երբեք և ոչ ալ իրենց խորին ու գութնալէն զատ բանի վրա կը մտածեն, իմացել է թէ հայեր ինքնավարութիւն խնդրած են Եւրոպայէն և թէ հայկական խնդիրն ալ ներկայացրել է Բերլինի վեհաժողովին. ուր որ կերթայի, շուրջ կը բոլորուէին հայ գիւղացիներ և տեղեկութիւններ կը հարցնէին թէ ինչ եղաւ Հայոց ազատութեան խնդրը, ինչպէս ինքնավարութիւն չը տրուեցաւ մեզ, մինչև երբ այսպէս պիտի չարարուենք թիւրքի բարբարոսական լուծին տակ, և այն: Բայց որովհետեւ ազգէտ են և սաստիկ ճնշուած, ինչպէս որ չուտ ոգևորուած էին հայոց խնդրին Եւրոպայի ներկայանալը լսելով այժմ ալ չուտով կը սաստիկ և կը յուսահատին, երբ կը լսեն թէ հայ պատգամաւորութեան խնդրած վարչական ինքնօրինութիւնը չէ ընդունուել Բերլինի վեհաժողովէն: Բաւական դժուարութիւններով կը հասկցունէինք այդ խեղճ գիւղացիներին թէ Բերլինի դաշնագրին 61-րդ յօդուածէն ինչ օգուտներ կարող ենք քաղել թէ որ աշխատանք և խնդր լինենք: Գիւղացին անդադար կը հարցնէ թէ ինչպէս մենք աշխատենք և պատրաստուենք ապագային համար քանի որ այս աստիճան նեղ և ճնշուած դրութեան մէջ ենք: Իրաւ է թէ այս կողմեր այնչափ հարստահարութիւններ չեն գործուել այժմ որչափ պատերազմէն ժամանակ քայքայ ժողովուրդն պատերազմին յառաջ աւելի հանգիստ դրութեան մէջ էր համամասնապէս կը ծովին վրայ սաստիկ ալեկոծութիւն պատահի, ալեկոծութիւնը դադրել յետոյ դեռ մի ժամանակ կը տեւ ծփանքը: Այնպէս եղած է նաեւ պատերազմէն յետոյ. թիւրքաց բարբարոսութիւններ կը շարունակուէին Եւրոպայի մօտեցած էի: ձինիլ գիւղէն երկու հայեր կուգային քաղաք գանգատելու համար թէ թիւրքեր կողոպտեցին իւրեանց եկեղեցիին: Բոլորովին յուսահատուած էին այդ մարդերը Հազին կը կարողանային մի մօտաւոր ապագայի յոյսերով հաստատուել զիրենք: Կը հարցնէին թէ ինչպէս զենք զենքով չէ պաշտպանիր: Կը պատասխանէին թէ մեր գիւղ 90 տուն կայ որոց 20 միայն հայ են, կառավարութիւնը ամեն նեղութիւններ, ձրի աշխատութիւններ (ուլամ) որ մեր գիւղին բաժին կիյնայ, հայերուն վրայ կը ծանրացունէ: ալ դիմաւորութեան կարողութիւն չէ մնացած: Արեւմտ գնացեք, ըսի, Հայոց խիտ ընտանգ տեղերն, օրինակ վանի մերձակայներն բնակութիւն հաստատեցէք: Այդ ալ դժուար բան է, պատասխանեցին, ինչպէս թողունք մեր տուն տեղ և ուրիշ տեղ երթանք: Կրկնեցի թէ այնչափ դժուար չէ որ չափ ռուսական դաւթիւն որուն համար պատրաստուած էիք դուք: Կամ միացեք, զօրացեք և, թէպէտ փոքրավիւ, անարկու եղէք ձեր դրացի թուրքերին և թիւրքերին, ինչպէս որ եղած են շատ տեղեր սակաւաթիւ չէք զենք և կամ վանի կողմեր գնացեք հաստատուեցէք, եթէ այնչափ նեղուած էք որ չէք կարող սպասել Անգլիայի և այլ եւրոպական տէրութիւններու ազդեցութեամբ լինելիք բարեկարգութիւններուն, թերեւ այդ բարեկարգութիւններ մօտ ժամանակ կը սկսեն իրագործուիլ:

Երբ էրդում էի, մի սոսկալի դէպք պատահեցաւ: Սքանաւ տէր-Գրիգոր քահանայի բնօրին, 18 տարեկան մի պատանի, թիւրքերէն կողոպտուել և սոսկալի կերպով սպանուել էր քաղաքէն մի քառորդի չափ հեռի Կայծակի ձոր կողմած տեղին: Գրիգոր բերին, մի քանի օր եկեղեցին պահեցին: Ժողովուրդն խռնուած եկեղեցոյն մէջ, կը պօռար թէ չը թողուր որ մնուէին թաղուի, մինչև որ արդարութիւն չը գործարուէին և արդարապէս բռնուելով չը պատժուէին: Մի քանի օր յետոյ հազիւ կարելի եղաւ համոզել ժողովուրդն և գիւղին թաղել: Շատեր կառաջարկէին զմուտել այդ գիւղ և յղել Կ. Պոլս կամ մինչև Անգլիա, իբրեւ մի նոր ապացոյց խոստացուած բարեկարգութիւններու գործարութեան:

Մենք թիւրքերն շատ մօտէն ճանչելով, նոցա մէջ ծնած և այնչափ ժամանակ կեանք անցուցած լինելով, հարստապապէս համոզուած ենք որ այդ ազգ երբեք չը պիտի բարեկարգուի և թիւրքացեցնելու ցանկութիւններուն չը պիտի

համապատասխանէ երբեք: Այս ազգի բարոյական կեանքը այն աստիճան սոսկալի կերպով ապականուած է որ իւր կործանում անտարակուսելի է: Եթէ մենք յոյս կը դնենք Հայաստանի մէջ լինելիք բարեկարգութիւններու վրայ, մեր այդ յոյսը հիմնուած է եւրոպական տէրութիւններու հաւաքական ազդեցութեան վրա: Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածին համեմատ և զխաւորապէս հայերու միաբան գործունէութեան և աշխատութեան վրա: Այս վերջին ժամանակ փոքր ի շատէ չարժանիք սկսած են երեւի մեր ազգի մէջ ալ: Մինչև որ եւրոպական հիւպատոսներ ազդեցութիւն չունենան այս տեղեր, թիւրքը ինքնին ոչինչ չը պիտի գործէ: Ժողովուրդը անհամբեր կը սպասէ այստեղ Տրապիզոնի ռուսական հիւպատոսարան քարտուղար պ. Էմիլիանովի գալուն որուն համար կը խօսուի թէ վանի ռուսական հիւպատոս անուանուած է: Նոյնպէս կը լսեմք թէ անգլիական հիւպատոս ալ կուգայ վան:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԼՕՆԴՈՆ, 30 յունվարի (11 փետրվարի) Կ. Պոլսի լուրերին նայելով, Ռուսթիւքաց խաղաղութեան դաշնագիրը կազմված է 12 յօդուածներից: Պատերազմական վարձատրութեան համար նշանակված է 300 միլիոն ռուբլ: Դաշնագրի վաւերացմամբ Ռուսները 40 օրվայ ընթացքում պէտք է մաքրեն թիւրքաց հողերը:

ԼՕՆԴՈՆ, 30 յունվարի (11 փետրվարի) Բարեկուսայ հրուանդանից հաղորդում են, որ յունվարի 27-ին անգլիական մի զօրախումբ, որ կազմված էր մասամբ ութսուներորդ գնդից և 600 քնիկներից, սարսափելի կորուստով ջարդվեցաւ 20 հազար Ջուլուսներից: Ջուլուսները տիրեցին 102 պաշարեցանքների կառքերի, երկու թընդանօթների, 400 պատերազմական զործիքների, 1000 հրացանների, 250 հազար հանգրի, ահագին քանակութիւն պաշարեցանքների և 80 զրօշակների: Ջուլուսներից սպանված են 5000 հոգի: Անգլիական խումբը ոչնչացած է, Անգլիացիների կողմից սպանվեցան 500 հետեակ զինուորներ, և 60 օգնիցներ: Նստալի երկրին մեծ վտանգ է սպառնում: Մապի նահանգի զինեալանահանգուպար Անգլիայից օգնական զօրքեր պահանջել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունվարի: Յունվարի 28-ին կոմս Լօրիս-Մեկլեով Թարեցին հասաւ, և սկսեց կատարել Աստրախան, Սարաուով և Սամարա նահանգների ժամանակաւոր գեներալ գուբերնատորութեան պարտականութիւնները:

ՅԱՐԻՑԻՆ, 29 յունվարի: Լօրիս-Մեկլեով հասնութիւն տուեց այն նախագծին, որ տեղային վարչութիւնը մշակել էր Վոլգայի կարան տիւնի դէի համար: Նուտով կը կազմվի մի առանձին մասնաժողով, որպէս զի նա մշակի Վոլգայի նաւակցութեան խափանման մանրամասնութիւնները: Լօրիս-Մեկլեով, ընդունելով մայրաքաղաքների լրագրիւնների թղթակցիցներին, յայտնեց, որ տարափոխիկ հիւանդութեան պատճառով, պէտք է երթարկել ամբողջ երկիրը առողջապահական կանոններին: Կոմսը մտադրել է Թարեցինում մնալ մօտ 10 օր, որից յետոյ նա մտադրում է ուղղեալով դէպի Աստրախան շրջապոյտ ճանապարհով: Ստալիսօպոլի վերջուտ Ստարախան բօրային մասնաժողովը հետադարձ է «Голова» լրագրին յունվարի 29-ից հետեւեալը: «Պաշտօնական տեղեկութիւններից և մասնաւոր հաղորդութիւններից երևում է որ տարափոխիկ հիւանդութիւնը կատարելապէս դադարած է: Մի քանի օր է արդէն, որ ամբողջ նահանգում հիւանդացողներ չը կան: Վերջին հիւանդը Սեւրախինոյ գիւղի մէջ առողջացաւ»:

Խմբագիր — Հրատար. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

MAISON DE COMMISSION
et d'exportation

NICOLAS AMIRAGOFF ET C^o

16, Rue de la Grange-Batelière

PARIS

Կոմիտեի անուն ԲԱՐՈՒՅՈՒՄ:

Կարգադրված 468 լիտրներով:

Ներկայացնում ԵՄՊԱՆԱՆՑ

ԳՐԻԳՈՐ ՆԵՍԻՆԵՆԻ
ՊԵՏՐՈՍԻ ԼԵՂՈՒՍՏԵՆ
ՐԻ ԽԵՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՎԱՆ
ՆԱԿԵՆ ԶԵՂԱՐԵՎԻՍ

ստացվել են մեծ քանակությամբ ձրագի և
ՏՐԻԿՈՒ ՍԻՐՏԻԿԱՆԵՐԻ ՇՈՐՔԻ, որոնցից
ԱՌԱՌՈՏԵՆ ԺՕԿԵՆՆԵՐ, ձմեռային ՊԱՆՏՆԵՐ և
ՎԱՏԻԿԱՆԵՐ, Երևանյան Հանրապետության, Վ.Ե.
ԲԱՐՈՒՅՈՒՄ ԽՈՒՄՆԵՐ զարգացում, նշանակալի
դուրսդրում են ՊԱՏՈՒՆԵՐ զինվորական և
քաղաքական հասարակության համար Յոյս ու
նեմ, որ ինչպես պատմությունները նշանակալի է
զնոթները ԲԱՌԱՎԱՆ ԿԵՄԵՆ:

34—75

ԹԻՖԼԻՍ Հիւրանոցում Դը-
վորցովայա փողոցի վրա, Սարա-
չիկի տան 1) պատրաստվում են
բլիճնե քոշիկների 17-ից առա-
ւել 11 ժամից մինչև երեկո-
վան 4 ժամը: Մուտքը բազմից է:

2—4

Особая КОНЧИВШАЯ С. ПЕТЕР-
БУРГСКИЕ ПЕДАГОГИЧЕСКИЕ КУР-
СЫ (теоретические и практические), да-
ють уроки по всем предметам гимна-
зического курса и по новейшим язы-
кам. Ретовитъ къ экзамену Домашней
Учительницы. Просить обращаться въ
контору газетнаго агентства Шавердова.

Մի օրինակ, որ ԻՐ ՈՒՍՈՒՄԸ ԱՌԱՐՏԵԼ
է ՊԵՏՐՈՍԻ ԼԵՂՈՒՍՏԵՆ ԳՐԻԳՈՐ
ՅՈՒՄ (տեսական և գործնական), ընդունում է
իւր վրա գիմնազիական կուրսի դասեր ամեն
առաքիններից, նշանակալի և նոր լեզուներից:
Պատրաստում է նշանակալի քննության «տեսային
վարժարաններ» պաշտոնին: Գրվել
«ՆԱԿԵՆ ԶԵՂԱՐԵՎԻՍ» լրագրական գործակալության
կանոններն:

ՌՈՒՍԱՑ ԹԵՑԻ ՎԱՃԱՌԱՆՈՑԻՑ նոր ստաց-
վեցան 100000 Փունտ Թուշանի և Կեա-
խտի թեյ սեփական փոխանակության 1
ր. 20 Կ. մինչև 8 ր. Փունտը: Թուշանի թեյի
համար ինձանից գնողներից շատերը նամակ-
ներով շնորհակալություն յայտնեցին, յոյս ու-
նեմ ապագայում գնողներից նշանակալի ուսա-
նալ: Մատուցում է մեծ քանակությամբ և
փոքր: Փոստայի ծախսը ինձ վրա առնում
են: Հասցեն Միջնադարյան կամուրջ, «Кавказ»-ի
խմբագրատան տակ: Վաճառական Ա. Պոլո-
սովսկին:

1—10

ԳԵՂԱՐՈՒՆՍԵՆՍԿԱՆ
ԼԵՂՈՒՍՏԵՆ

որ գտնվում էր Գորովնովի պարտեզի վրա
Սարաչովի տանը, այժմ գտնվում է նոյն ԳՕ-
104-ի ՍԱԿԻ պարտեզի վրա, ՇԻՕՆՎԻ տանը,
Գերմանական կուրսի և Վեյստի ֆոտոգրա-
ֆիայի մոտ մի և նոյն սանդուղքով: Այցե-
դիրների համար բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտան
9 ժամից մինչև երեկոյան 5 ժամը: Հաւա-
քածուին ՆՈՐ ՆԱԿԵՆԵՐ են աւելացրած:

25—25

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառ-
վում է Կամար տեղ-Կալթանցի Русское
СЛОВО—նոր դասագիրքը ուսուցիչներին լեզուի,
հայ գաղութների համար, երկրորդ ապագրու-
թիւն, նորանոր տգրաւաններով և փոխառու-
թիւններով լրացրած: Այս գիրքը հաճու-
թեամբ պիտի մտնի վերադարձնել ընդունված
է Վրաստանի և Իմերեթի վիճակի հայոց
բոլոր միջնակարգ և ծխական ուսումնարան-
ներում: Սա ընդունված է նշանակալի Կովկասի
և միւս թեմերի ուսումնարաններից շատե-
րում: Վաճառվում է Թիֆլիսում բոլոր գրա-
վաճառանոցներում: Կարող են ստանալ և
աշխատանքի դրողը Արթուրյանների մա-
գազինում, Միխայիլովի կամուրջի վրա,
զինն է 40 կոպեկ: Ճանապարհի ծախսը առ-
նողների վրա է: Գումարով առնողներին մեծ
վճարում կը լինի եթէ զինն ուղղակի աշ-
խատանքի դնեն հետեւալ հասցեով:

Тифлисъ. Камсару Теръ-Давидианцъ.
Въ магазинѣ бр. Абовянцъ, на Ми-
хайловскомъ мосту.

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ
ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМЪ ВОСКРЕСНЫХЪ
ДНЕЙ ОТЪ 9 ЧАСОВЪ УТРА ДО 2 ЧАСОВЪ ПОПОЛУДНИ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է: ԵՐԵՆ ՕՐ ԸՌԱՆՕՏԵՆՆ 9 Ժամից մինչև 2 Ժա-
կեսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից:

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ
ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ
ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՅԻ
ՀԱՏ ԷՃԱՆ ԳՆԵՐՈՎՎ ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ
ԽԵՆՈՒԹՆԵՐԸ

ԳԱՐԱԾՈՒԻ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԱՆՏԻ

(ՀԱՆՏԻՑ), ՈՐ ԳՏԵՎՈՒՄ Է ԶԵԼՕԲԱՆԻ ԱՐՈՒՐՁԱՆԻ ԿՈՒՐՏԵՐԱ

ԳԻՒԼՈՒՄ

ԸՆԿ. ՆԵՅՄԱՆ—ՀԵՆՆԻԳ

Թափվում է ՇԵՐՆԵՐԻ ՊԵՂԻԿՈՒՄ ՄԵԾ ԳԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՁ ՎԱԳՐՆԵՐՈՎ ԵՐԱԿՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒ-
ԴԸ 25 ԿՈՒ, ԻՄԿ ՓՈԲՐ ԳԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ԳԱԼԱՔԻ
ՄԷՋ ԳՏԵՎՈՐ, ՊԱԶԵՍՏԻՑ ՊՈՒՂԸ 28 ԿՈՒԷԿՈՎ:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷՋ
ԵՒ
ՏԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Աշակերտների և աշակերտուհիների ընդունվելուը սկսաւ յունվարի 8-ին 1879

Թուականի
Մանկական պարտեզը ընդունվում են մանուկներ, երկու տարի էլ 4-ից մինչև 7 տա-
րեկան հասակը, իսկ տարրական դպրոցը 7-ից—12 տարեկանները:
Ուսման ընթացքը յարմարեցրած է միւս դպրոցների ընթացքին, այնպէս որ դպրո-
ցում աւարտողները կարող են մտնել տղայք տղայոց և աղջկանք օրինորդաց դպրոցի առա-
ջին դասատուները:
Պարտեզի ու դպրոցը գտնվում են Վերնափողովի փողոցում Իշխան Ն. Ամատունու
տանը. №—11:

ՓԵՏՐՎԱՐԻ 1.		Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց		ԹԻՖԼԻՍ 1879	
ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՑ	Բ.	Կ.	ՀԱՌԱԳԻՐ	ՓՈԹԻ-ՓԻՖԼԻՍԵՆԵՐ ԵՐԿԱ- ՓՈՒԼԻ	ՓՈՍՏ
Ռաֆին (պոլոնիզացիայի)	8	53	Կապիտալ և Ա-	Թիֆլիսից մինչև Փոթի	Ամեն տեսակ թէ նա-
Հին 82 պր. 1000	1630	—	զեղված քա-	(ճանապարհորդների գնացքը) 9	մաներ, թէ լրագրիներ և
Հին 20 Կ. 72 պր. 1000	1820	—	ղաքներ	ժամին 21 րոպէ առաւօտան:	թէ ծանր փոստ ամեն տեղ
Վերջին 50% առաջի փո-	—	—	Ռուսաստան	Մինչև Միխայիլով (խառն	ուղարկելու, ընդունվում
խառնվածքն առաջ 100	233	—	Աւարտիւ	գնացքը) երեկոյան 5 ժամ, 18	են ամեն օր, առաւօտան
Երկրորդ 50% վերջինի	229	—	Անգլիա	րոպէ:	8 ժամից մինչև 1 և կէսօրից
Մարտի 1-ից 245	100	—	Պերսիա	—	յետոյ 3 ժամից մինչև 7:
Երկրորդ կուրսը Օգոստոսի	—	—	Յրանալիս	—	Իսկ կիրակի օրերը հասա-
վրա	10	30	—	—	րակ նամակներ մինչև 10
Վերջին կուրսը մէ 121 զր	100	—	—	—	ժամ առաւօտան և 3—7
Վերջին կուրսը մէ 121 զր	—	—	—	—	երեկոյան:
Առաւօտան բանի ակ-	—	—	—	—	Ռուսաստանից և
ցիան 200 զ.	315	—	—	—	Արտասահմանից
Փոթի Թիֆլիսի 125 զ.	102	—	—	—	փոստը ստացվում է Թիֆ-
Շաքարի բրդին	7	40	—	—	լիսում ամեն օր: Բա-
միւս տեսակը	—	—	—	—	զուր տարակից երե-
շաքարաւոր	6	30	—	—	քաթի և շաքար օրերը
արանգիտը	6	80	—	—	երևանի տրակից եր-
մարմար վարած	12	—	—	—	կուղարթի, հիւղարթի և
Բամբակ և Երևանի Ա-	—	—	—	—	շաքար, Փոթի-Թիֆ-
մերկայի անրմիջ յՕԿՕ	7	40	—	—	լիսան երկաթուղուց
Միւս տեսակը հին սերմից	6	70	—	—	ամեն օր: Դուրս տրակ-
Բուրբը թույլ	8	—	—	—	ից չորեքաթի և կի-
Թարաքամի	4	10	—	—	րակի: Բերկիլիւշի տը-
Արեւել Երազալու	1	80	—	—	րակից երեքաթի և շա-
Երևանի	—	—	—	—	քաթի:
Պարիս	1	30	—	—	ՆԱՄԱԿՆԵՐ
Մամբ քննադատի (сгар.)	12	60	—	—	Բաց նամակ արթէ
Մետաղը Երևանի	190	—	—	—	Ռուսաստան և Եւ-
Կարիկներ	140	—	—	—	րօպայի բոլոր երկր-
Կարիկներ Երևանի (սոփ.)	40	—	—	—	ները նամակը արթէ
Ֆրիզան (լաւը) Արեւ-	—	—	—	—	Ամերիկա
լանց	55	—	—	—	Պարսկաստան
Կօֆէն Թիֆլիսի	27	—	—	—	Հնդկաստան
Երևանի	23	—	—	—	Եգիպտոս
Մարտիկային	18	—	—	—	—